Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

(համաձայն հերթական համալիր ստուգման արդյունքների)

«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 01.12.2011թ. թիվ 23 արձանագրությամբ «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների 5.4-րդ և 6.2-րդ կետերի, RL 1-002 կանոնների 12-րդ կետի 1-ին ենթակետի, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ կետերի, 18-րդ կետի 4-րդ ենթակետի, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ կետերի, 25-րդ կետի 3-րդ ենթակետի, 26-րդ, 27-րդ և 28-րդ կետերի, RL 1-005 կանոնների 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, RL 1-010 կանոնների 1-ին կետի և RL 1-027 կանոնների 11-րդ կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 100.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-009 կանոնների 2.1-րդ կետի, 3-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության, 5-րդ ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերությունների և 6-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 250.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 11.7-րդ կետով սահմանված աղյուսակի 2-րդ կետի և RL 1-003 կանոնների 29.4-րդ կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 100.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 7.6-րդ, 8.1.1-րդ, 8.2.7-րդ, 8.3.1-րդ, 8.3.8-րդ, 8.4.1-րդ և 8.4.4-րդ կետերի, RL 1-013 կանոնների 6-րդ կետի, RL 1-017 կանոնների 5-րդ, 6-րդ, 10-րդ և 13-րդ կետերի, 18-րդ կետի 2-րդ ենթակետի, 20-րդ և 22-րդ կետերի, RL 1-029

կանոնների 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի և 30-րդ կետի 1-ին ենթակետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 300.000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 8.3.1-ին և 8.3.2-րդ կետերի և RL 1-017 կանոնների 5-րդ, 8-րդ և 12-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 400.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-003 կանոնների 29.2-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով: Ընկերությանը տրվել է հանձնարարական 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել նկարագրված խախտումը:

RL 1-006 կանոնների 1-ին կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 900.000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-003 կանոնների 29.3-րդ և RL 1-011 կանոնների 2-րդ կետերի, RL 1-023 կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետի և RL 1-027 կանոնների 12-րդ կետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 300.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

Որոշմամբ սահմանված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 2.350.000 ՀՀ դրամ: